Ծերության Կենսաթոշակ եւ Վերապրողների Նպաստներ

Միացեալ Նահանգներում բնակող գրեթե յուրաքանչյուր անհատի կյանքը ազդված է Սոցիալական Ապահովության կողմից՝ որովհետեւ նրանք աշխատում են եւ վճարում Սոցիալական Ապահովության հարկեր, կամ էլ ստանում են Սոցիալական Ապահովության նպաստներ: Սոցիալական Ապահովության նպաստները վճարվում են աշխատողներին եւ նրանց ընտանիքների իրավասու անդամներին՝ երբ աշխատողը անցնում է կենսաթոշակի կամ դառնում է հաշմանդամ: Վերապրողների նպաստ կարող է վճարվել ընտանիքի իրավասու անդամներին աշխատողի մահից հետո: Սույն տեղեկաթերթում նկարագրված են ծերության կենսաթոշակ եւ վերապրողի կապակցությամբ նպաստներ: Հաշմանդամության նպաստների հետ կապված հարցերով դիմեք Սոցիալական Ապահովության եւ ստացեք *«Հաշմանդամության Նպաստներ»* հրատարակությունը (հրատարակության համար 05-10701-AM):

Անհատներ որոնք 65 տարեկան (կամ ավելի) են, կույր կամ հաշմանդամ (որեւէ տարիքում) կարող են իրավասու լինել Լրացուցիչ Ապահովության Եկամուտի (SSI) վճարումներին: Լրացուցիչ Ապահովության Եկամուտը տրամադրում է վճարումներ այն մարդկանց, որոնք ունեն փոքր եկամուտ (կամ ոչինչ) եւ քիչ դրամական միջոցներ: Լրացուցիչ Ապահովության Եկամուտի վճարումների մասին հաւելյալ տեղեկություն ստանալու համար կարդացեք «*Լրացուցիչ Ապահովության Եկամուտի Վճարումներ*» հրատարակությունը (հրատարակության համար 05-10702-AM):

Ձեր Աշխատանքի Տարիները

Սոցիալական Ապահովության համակարգում ընգրկվելու համար պարտադիր չե Միացեալ Նահանգների քաղաքացի լինելը: Եթե դուք ստացել եք Ամերիկայի Միացեալ Նահանգներում օրինական աշխատելու իրավունքը, դուք կարող եք աշխատել Սոցիալական Ապահովության ծրագիրներու օրենքների համեմատ: Աշխատելու ընթացքում դուք նաեւ վաստակում եք Մէտիքէրի առողջության ապահովագրական նպաստների իրավասությունը ապագայի համար:

Աշխատանքի ընթացքում դուք ձեր հասույթից վճարում եք Սոցիալական Ապահովության հարկեր: Եթե գործավոր եք, ձեր գործատէրը վճարում է հաւասարաչափ Սոցիալական Ապահովության հարկեր ձեզ համար: Եթե ինքնաշխատ եք, դուք վճարում եք գործավորի եւ գործատիրոջ հարկի մասնաբաժինները: Այս աշխատանքն ու հարկերը արձանագրվում են ձեր Սոցիալական Ապահովության համարի տակ: Նույնիսկ եթե աշխատանքի վայրը փոխեք, դուք շարունակում եք օգտագործել նոյն Սոցիալական Ապահովության համարը եւ ձեր հասույթը մնում է ձեր հաշվեցոյցի վրա:

Որովհետեւ ձեր Սոցիալական Ապահովության նպաստները կախյալ են ձեր աշխատանքի ընթացքում վաստակած հասույթից, կարեւոր է որ միշտ օգտագործեք Սոցիալական Ապահովության նոյն համարը եւ ստուգեք որ ձեր գործատէրերը պահեն Սոցիալական Ապահովության հարկեր: Կարդացեք մեր կողմից ուղարկված ձեր տարեկան ,Սոցիալական Ապահովության Հաշուեցոյցեր ստուգելու ձեր ամբողջ հասույթի արձանագրումը ձեր համարի տակ: Հաշուեցոյցը նաեւ ներկայացնում է ապագայում ձեր ստանալիք Սոցիալական Ապահովության նպաստների գումարը ծերության, հաշմանդամության եւ վերապրողների կապակցությամբ:

Ծերության Կենսաթոշակներ

Ծերության կենսաթոշակ ստանալու համար մի անձ պետք է առնվազն 10 տարի աշխատած լինի եւ վճարած Սոցիալական Ապահովության հարկեր: Եթե դուք ծնվել եք 1929-ից առաջ, ձեզնից կը պահանջվի 10 տարուց պակաս աշխատանք: Ձեր ծերության կենսաթոշակի չափը կախյալ է ձեր Սոցիալական Ապահովության համարի տակ վաստակած հասույթից: Որքան բարձր լինի ձեր հասույթը, այդքան բարձր կը լինի ձեր կենսաթոշակը:

Սոցիալական Ապահովության ծերության կենսաթոշակները կարող են վճարվել 62 տարեկանից սկսյալ: Սակայն, 62 տարեկանում ձեր կենսաթոշակի գումարը կը լինի ավելի նվազ, քան եթե կենսաթոշակի անցնեք ավելի ուշ: Կենսաթոշակի ամբողջական գումարը վճարվում է 65 տարեկանում՝ եթե ծնվել եք նախկան 1938 թվականը: Սոցիալական Ապահովության օրենքը փոխվել է եւ լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքը աստիճանաբար բարձրանում է, հասնելով 67 տարուն այն մարդկանց համար, որոնք ծնվել են 1960 թվականին կամ ավելի ուշ: Այս փոփոխությունը ազդում է 1938 թվականից եւ աւելի ուշ ծնվածների:

Ձեր ընտանիքի որոշ անդամները կարող են իրավասու լինել Սոցիալական Ապահովության նպաստների՝ ձեր աշխատանքի հիման վրա: Ձեր կինը կամ ամուսինը կարող է նպաստներ ստանալ 62 տարեկանում: Եթե ձեր կինը կամ ամուսինը խնամում է ձեր երեխային, որը նպաստներ է ստանում ձեր հաշվից, նա կարող է նպաստներ ստանալ աւելի երիտասարդ տարիքում: Ձեր նախկին կինը կամ ամուսինը կարող է իրավասու լինել նպաստներ ստանալու ձեր հաշվից՝ եթե դուք առնվազն 10 տարի ամուսնացած եք եղել իրար հետ:

Երեխաներ Սոցիալական Ապահովության նպաստներ կարող են ստանալ մինչեւ 18 տարեկան, կամ մինչեւ 19՝ եթե նրանք հաճախում են երկրորդական վարժարան: Երեխաներ կարող են ստանալ նպաստներ 18 տարեկանից ետք, եթե նրանք հաշմանդամ են եւ նրանց հաշմանդամությունը սկսվել է նախկան 22 տարեկան լրանալը:

Կենսաթոշակի անցնելուց մեկ տարի առաջ դուք պետք է խոսեք Սոցիալական Ապահովության ներկայացուցիչի հետ: Սոցիալական Ապահովության օրենքները խրթին ու բարդ են եւ թերեւս ձեզ համար նպաստավոր լինի կենսաթոշակի անցնել նախքան ձեր աշխատանքից դադրելը:

(շրջել)

Վերապրողներու Նպաստներ

Աշխատողի մահվան դեպքում, ընտանիքի անդամները կարող են ստանալ Սոցիալական Ապահովության ամսական նպաստներ: Վերապրողների նպաստ վճարելու համար պահանջվող աշխատանքի քանակը կախյալ է մահացողի տարիքից: Երիտասարդ աշխատողի համար կարող է պահանջը լինի ընդամենը մեկ կամ մեկուկես տարի: Որեւէ մի անհատ 10 տարուց աւելի աշխատանք պետք չունի:

Այրի կին կամ ամուսին կարող է նպաստ ստանալ 60 տարեկանում կամ նոյնիսկ ավելի կանուխ եթե խնամում է մահացողի երեխային, որը նոյնպես ստանում է նպաստ մահացողի հաշվից: Հաշմանդամ այրի կին կամ ամուսին կարող է նպաստ ստանալ 50 տարեկանում: Ամուսնալուծված այրի կին կամ ամուսին նոյնպես կարող է իրավասու լինել նպաստ ստանալու համար:

Երեխաներ նպաստներ կարող են ստանալ մինչեւ 18 տարեկան, կամ մինչեւ 19՝ եթե նրանք հաճախում են երկրորդական վարժարան: Երեխաներ կարող են ստանալ նպաստներ 18 տարեկանից ետք, եթե նրանք հաշմանդամ են եւ նրանց հաշմանդամությունը սկսվել է նախկան 22 տարեկան լրանալը:

Վերապրողի նպաստներ ստանալու համար անհրաժեշտ է դիմել իրավասու դառնալուն պես:

«Մէտիքէր»

Մէտիքէրը առողջության ապահովագրական մի ծրագիր է 65 եւ ավելի տարիք ունեցող անձերի համար, հաշմանդամների որոնք 65 տաեկանից փոքր են, եւ երիկամունքի մշտական ձախողություն (Kidney Failure) կամ Ամիոտրոֆիկ Լէդրրլ Սկլերոսիս, որն նաեւ կոչվում է Լու Կեհրիկի հիվանդություն (Amyotrophic Lateral Sclerosis) , ունեցողներու համար:

Եթե 65 տարեկանից առաջ արդեն ստանում եք Սոցիալական Ապահովության նպաստներ, ինքնաբերաբար ձեր Մէտիքէրի ապահովագրությունը կը սկսի երբ 65 տարեկան լինեք: Եթե նպաստներ չեք ստանում, դուք պետք է դիմեք Մէտիքէրի 65 տարին լրանալուց երեք կամ չորս ամիս առաջ:

Անհրաժեշտ Փաստաթղթեր

Ձեզանից կը պահանջվի ներկայացնել որոշ փաստաթղթեր ապացոյցելու ձեր իրավասությունը Սոցիալական Ապահովության նպաստների եւ որոշելու այդ նպաստների գումարը: Անհրաժեշտ փաստաթղթերը կը տարբերին ձեր անձնական պարագաներու համեմատ: Ստորեւ ներկայացված է պահանջվող փաստաթղթերի ցանկը՝

- Ձեր Սոցիալական Ապահովության քարտը (կամ ձեր համարի ապացոյցը),
- Ձեր ծննդյան վկայականը,
- Երեխաների ծննդյան վկայականները (եթե նրանք դիմում են),
- Ամերիկայի Միացեալ Նահանգներու քաղաքացիության կամ օրինական օտարերկրացիի կարգավիճակի ապացոյցը, եթե դուք (կամ դիմող երեխան) Ամերիկայի Միացեալ Նահանգներում չեք ծնվել,
- Ձեր կնոջ (կամ ամուսնու) ծննդյան վկայականը եւ Սոցիալական Ապահովության համարը, եթե նա նպաստների դիմում է ձեր աշխատանքի հիման վրա,
- Ամուսնության վկայականը (կնոջ կամ ամուսնու աշխատանքի հիման վրա դիմում ներկայացնելու դեպքում),
- Ձեր զինվորական ծառայության փաստաթղթերը (եթե դուք եղել եք զինվոր),
- Ձեր վերջին W-2 Form-ը կամ հարկային հայտարարագիրը՝ եթե ինքնաշխատ եք:

Դիմումի ներկայացման ժամանակ, ձեզ կը տեղեկացնենք եթե այլ փաստաթղթերի անհրաժեշտությանը լինի:

Կարեւոր տեղեկություն՝ Դուք պետք է ներկայացնեք բնագիր փաստաթղթեր կամ օրինակներ որոնք հաստատված են փաստաթղթի խնամակալի կողմից: Կարող եք դրանք ուղարկել կամ բերել Սոցիալական Ապահովություն գրասենյակ: Մենք ուսումնասիրելուց հետո ետ կը վերադարձնենք ձեր փաստաթղթերը: Մի ուշացրեք Սոցիալական Ապահովության դիմում ներկայացնելը նոյնիսկ եթե չունեք պահանջվող բոլոր փաստաթղթերը: Մենք ձեզ կօգնենք, որ գտնեք պահանջվող տեղեկությունը:

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատել

Հաւելյալ տեղեկության համար, այցելեցեք մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** ուր նաեւ կարող եք գտնել մեր վերջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետեւյալ անվճար թվին **1-800-772-1213** (խուլերը եւ դժուար լսողները թող զանգահարեն հետեւյալ հատուկ TTY թվին **1-800-325-0778**): Ինքնաշխատ հեռաձայնային ծառայությամբ, մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել օրը 24 ժամ:

Եթե թարգմանիչի Պետք Ունեք. Մենք ձեզ համար անվճար թարգմանիչ կարող ենք տրամադրել որպեսզի դուք կարողանաք մեզ հետ ձեր գործերը կատարեք: Այս թարգմանչական ծառայությունը կարող եք գտնել մեր գրասենյակներում եւ հեռաձայնի վրայ: Զանգահարեցե՛ք մեզ հետեւյալ թվին **1-800-772-1213** եւ ճնշե՛ք թիւ մէկը: Հեռաձայնը պատասխանող ներկայացուցիչը միացնում է ձեզ թարգմանիչի հետ որպեսզի ան օգնէ ձեզի: Եթե չ՛կարողացանք հեռաձայնով օգտակար լինել, ժամադրություն ենք տալիս որպեսզի դուք այցելեք ձեր տեղական գրասենյակը որտեղ ներկայ կը լինի նաեւ թարգմանիչը:

Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Ուզում ենք նաեւ վստահ լինել, թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:

Social Security Administration
SSA Publication No. 05-10700-AM
Retirement And Survivors Benefits (Armenian)
January 2005